ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման հետ կապված ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.10.2019թ. 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան/գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան/գնահատող/

Արմեն Հակոբջանյան /գնահատող/

Խորեն Մնացականյան/բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	«Հերմես» ՍՊԸ	hermes.ltd@mail.ru

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 «Հերմես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննութուն» լիցենզիան:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 «Հերմես» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գին, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Հերմես» ՍՊԸ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ	
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	4158880	3780000	3780000

6. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Հերմես» ՍՊԸ»-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 11-ին ժամը 16:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 11.10.2019թ. ժամը 16:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան/գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան/գնահատող/

Արմեն Հակոբջանյան /գնահատող/

Խորեն Մնացականյան/բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

8.1 «Հերմես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հերմես» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

10.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 9-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

10.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____Կարեն Սիմոնյան /նախագահ/

_____Հրանտ Հովսեփյան

_____Արմեն Հակոբջանյան

_____Խորեն Մնացականյան

_____Արմինե Ստեփանյան

_____Աննա Սիմոնյան /քարտուղար/